ՀԻՓՈԹԵՔԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն իրականացնում է «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ միջոցներով «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում տրամադրվող հիփոթեքային վարկերի հաճախորդների չվճարված կանխավճարի ապահովագրությունը

Ապահովագրության օբյեկտ

Կանխավճարի ապահովագրությունը դա վարկառուի հիփոթեքային պարտավորության մի մասի ապահովագրումն է.

- առաջնային շուկայից ձեռք բերվող բնակարանների դեպքում՝ բնակարանի արժեքի առավելագույնը 10%-ի չափով,
- երկրորդային շուկայից ձեռք բերվող բնակարանների եպքում՝ բնակարանի արժեքի առավելագույնը 20%-ի չափով:

Ապահովագրական ռիսկեր և պատահարներ

Ապահովագրական պատահար է համարվում վարկառուի կողմից վարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով գրավադրված գույքի բռնագանձման և իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին վարկառուի՝ Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների ոչ ամբողջական մարումը, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Բանկին հատուցել չվճարված կանխավճարի գծով վնասը:

Ապահովագրության պայմանները կարգավորվում են «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի 12.09.2018թ. Թիվ 02-Ո-007/04 Որոշմամբ հաստատված Կանխավճարի ապահովագրության պայմաններով:

Ապահովագրական պատահարներից բացառությունները

Ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

- գրավադրված և կառուցման մեջ գտնվող անշարժ գույքի բացակայությունը շինարարությունը չավարտելու կամ կառուցապատողի սնանկացման պատճառով,
- վարկի չմարման կամ ոչ պատշաճ մարման հետևանքով առաջացած տույժերը, տուգանքները, կոմիսիոն վճարները և պարտադիր այլ վճարները,
- ապահովագարական պատահարի տեղի ունենալու ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի սահմանված ժամկետներում չներկայացումը կամ թերի ներկայացումը և այլ դեպքեր/իրավիճակներ, որոնք մանրամասն ներկայացված են Ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում:

Չհատուցվող գումար

Սույն ապահովագրությամբ չհատուցվող գումար չի կիրառվում:

Ապահովագրական վճար

Տարեկան ապահովագրավճարը հաշվարկվում է ապահովագրական գումարի 2 (երկու)%-ի չափով և վճարվում է տարեկան կտրվածքով միանվագ կարգով:

Ապահովագրական պայմանագրի գործողությունը կանոնակարգող կանոններին և հատուցման ընթացակարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ՝ այցելելով ապահովագրական ընկերության ստորև նշված web կայքը

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5
Հեռ. (374 60) 54-00-00
Կայք՝ www.silinsurance.am

_____
(Վարկառուի ԱԱՀ)

_____
(Վարկային պայմանագրի համար)